

Գեղարքունիքի մարզպետն աշխատանքային այցով եղավ Մարտունի քաղաքում

11.07.2017

Այսօր՝ հուլիսի 11-ին, Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանն աշխատանքային շրջայցով Մարտունի համայնքում էր: Մարզպետը, Մարտունու համայնքի ղեկավար Արմեն Ավետիսյանի ուղեկցությամբ, նախ այցելեց համայնքի միջոցներով բացված հանրային լողափ, տեղում ծանոթացավ հուլիսի 22-ին այստեղ կայանալիք վարդավառի արարողությանը նվիրված տոնակատարության նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքներին: Կարեն Բոթոյանը նշեց, որ միջոցառումը պետք է անցկացվի բարձր մակարդակով և նոր ձևաչափով, այն դարձնելով ամենամյա: Մարզպետը հավելեց նաև, որ նման կարգի միջոցառումը կարող է դառնալ ազգային մշակույթի մասսայականացման համար լուրջ հարթակ, որի արդյունքում տարածաշրջանը ավելի գրավիչ կդառնա զբոսաշրջիկների համար:

Այնուհետ Մարտունու քաղաքապետարանում, տարածաշրջանի համայնքների ղեկավարների մասնակցությամբ տեղի ունեցավ խորհրդակցություն, որի ընթացքում մարզպետը հատուկ քննարկման առարկա դարձրեց որոշ համայնքներում առկա ոռոգման ջրի հետ կապված խնդիրը: Կարեն Բոթոյանը իր խոսքում նշեց, որ չնայած իրավական որոշակի թերացումների և տեխնիկական խնդիրների, այնուամենայնիվ պետք է ամեն ջանք գործադրել, որպեսզի հնարավորինս արագ ապահովվի ոռոգման ջրի բավարար քանակություն: Հանդիպման ընթացքում քննարկվեցին նաև համայնքների ղեկավարների կողմից ներկայացված այլ բնույթի հարցեր: